# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

27.09.2020 22:16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը,

***հաշվի առնելով*** Արցախի Հանրապետությունում ադրբեջանական կողմի ռազմական ագրեսիան, որի թիրախում են հայտնվել նաև խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման և Հայաստանի Հանրապետության տարածք ներխուժելու անմիջական վտանգը, դրանով պայմանավորված ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» 2020 սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշումը,

***կարևորելով*** Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ժողովուրդների անվտանգությունը, առանց որի չի կարող ապահովվել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը,

***արձանագրելով, որ*** Ադրբեջանի քաղաքական ղեկավարության կողմից հայերի և Հայաստանի Հանրապետության դեմ էթնիկ ատելություն հրահրող հայտարարությունները և գործողությունները խախտում են ոչ միայն միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունները, այդ թվում՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված պոզիտիվ պարտավորությունները, այլ նաև Ադրբեջանի ազգային օրենսդրության պահանջները («ցեղասպանության իրականացման հրահրում» (Ադրբեջանի քրեական օրենսգրքի 104-րդ հոդված) և «ագրեսիվ պատերազմ ծրագրելը, նախապատրաստելը, սանձազերծելը կամ վարելը» (Ադրբեջանի քրեական օրենսգրքի 100-րդ հոդված)).

***նկատի ունենալով այն***, որ փաստաբանները նույնպես կամավորական խմբեր կազմելու նախաձեռնությամբ են հանդես եկել,

1. ***Խստագույնս դատապարտում է*** Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության ագրեսիան Արցախի Հանրապետության նկատմամբ.
2. ***Ձևավորում է աշխատանքային խումբ***՝ միջազգային կառույցներում Ադրբեջանի ագրեսիայից տուժած խաղաղ բնակչության իրավունքների պաշտպանությանն օժանդակելու նպատակով.
3. ***Ձևավորում է օժանդակող փաստաբանական***

***խմբեր***՝ կամավորական կամ զորահավաքային կարգով ռազմական գործողություններում ներգրավված փաստաբանների փոխարեն նրանց մասնագիտական աշխատանքներին աջակցելու նպատակով.

4. ***Տեղեկացնում է հանրությանը***, որ քաղաքացիական գործերով դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝ պատասխանողը ռազմական դրության մեջ գտնվող զինված ուժերի կազմում է, կամ ռազմական դրության մեջ գտնվող զինված ուժերի կազմում գտնվող հայցվորը դիմել է համապատասխան միջնորդությամբ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })